ՖԻՈԼԵՏՈՎՈ

«Երփներանգ ծաղկով զարդարեալ, ծաղկածին և անտառախիտ լերամբք շրջապատեալ» (այսպես է նկարագրում գյուղը Զալալյանցը (հատ. Բ, 105): Այն լքվել-ամայացել է հետագա դարերում և վերաբնակեցվել 1840-ական թվականներին հայերի և հոգեմարտ ռուսների կողմից:

983. ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉՔԱՐ. եզրանիստերին (XIIIդ.).

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ՝ ՍԱՍՆԵՍ, ՇԻՆԵՑԻ ՁԿԱՄՈՒՐՋՍ
[ՎԱՍՆ] ՀՈԳՈՅ [ԻՄՈՅ, Կ]ԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ ԲԱՐԷ-
ԽԱԻՍ ՄԵՂԱՑ ԻՄՈՑ: ՏՐ ԱՁ ՈՂՈՐՄԻ ՍԱՍՆԻՆ:

Ծանոթ. Հյուսիսային Հայաստանում, Մեծավանից մինչև հարավային Արցախ, տարածված են IV-XVII դդ. թևավոր խաչեր, որոնց մի մասը՝ կաղնի ծառերի տակ, իբրև երբեմնի բնապաշտության ու քրիստոնեության «հաշտության խորհրդանիշ»: Սասնայի խաչքարը ևս կաղնիների միջավայրում է, գյուղից 2 կմ արևելք, «Շավռուղ» բլրի պատմական գերեզմանոցում, ուր դեռևս պահպանվում են մի շարք խաչքարեր, տապանաքարեր ու դատարկ պատվանդաններ (X-XVII դդ.): Իսկ թե որտեղ է եղել կամուրջը, ստույգ հայտնի չէ, թեև պարզ է, որ այն պետք է լիներ գյուղամերձ գետի վրա:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Շրջանի ճարտարապետական հուշարձաններն իրենց ժամանակագրական բնութագրով չափազանց ինքնատիպ են և դրանով իսկ կարևոր տեղ ունեն հայ մշակույթի պատմության մեջ: Այստեղ չկան այնպիսի հռչակավոր և մեծափարթամ վանական հաստատություններ, ինչպիսիք են Սանահնի ու Հաղբատի վանքերը իրենց շքեղ ու երևելի ճարտարապետությամբ ու արվեստով, չկան նաև Օձունի եկեղեցու նման մեծարված կամ Հոռոմայրի, Քոբայրի ու Խորակերտի վանքերի նման ավանդապատումներով հռչակված հաստատություններ: Այս շրջանի եկեղեցիներն ու կամուրջները, բերդերն ու հասարակական տարաբնույթ շենքերը կառուցող անձինք մնացել են մեծ մասամբ անհայտ՝ չնայած նրանք կերտել են ճարտարապետական մեծագործ ստեղծագործություններ, որոնք մնացել են որպես տեղական փոքրիկ շրջանակի կարիքները բավարարող հոգևոր հաստատություններ: Սակայն, բոլոր դեպքերում, Հայաստանի աշխարհագրական այս հատվածում առավել քան որևէ տեղ ներկայացված են վաղ քրիստոնեական ճարտարապետության առանձնահատուկ հորինվածքները, որոնք, որոշ հետազոտողների կարծիքով, առանց լուրջ հիմնավորման, հաճախ թվագրվել են սխալ: Ա. Մանուչարյանի վստահ ենթադրությամբ, այդօրինակ շինություններից են մեկ կողմանի